99. ՄԱՐԹԻՆ ԿՅԻՐԵՋՄԱՆԸ ՔԱՆԴՈ̈Ղ ԿՆԵԳՅԸ

Մին մարթ ա ինի՚մ, մինգյել մին կնիգյ։ Տա՛հանք ը̈իրը̈ւր շատ սիրիլիս ըն ինի՚մ։ Մին օր պայման ըն կապում, վըեր ը̈իրա̈նց անա մինը մըռնելան հետը էն մինը մինչև ը̈իրա̈ն կյանքըեն վերջը իրփըվերի մնա։

Հունց ա պըտահում, մարթը ճելլի յա մըեռնում։ Կնեգյը տա-նում ա, հունցը կարգն ա, մարթին թաղում, կյիրըզմանեն յիրա յէլ մին ըլաչուխ վըեր թողում, կոխկեն մին ըլաչուխ էլ ը̈իրա̈ն հետե վըեր թողում, տակեն ուրուշու հետե չխարակ մանում, ը̈ի-րա̈ն օրըեն հացըեն փողն ինքյ օնում, ըտըեղ էլ ապրում։

Էտ հինգյըստարանը հղըցա մոտե յա ինի՚մ, քյինող-կյըլվողն էլ շատ։

Մին օր տըեղավ մին շատ հարուստ խոջա յա ը̈իրա̈ն քյըրվա-նավն անց կենում։ Խոջան ըտըեղ քյարվանը վըեննն ա անում, մին քանի մարթ ղարկում էտ կնգանը կոշտը, տահանց թափշուր ա-նում, ասում.—Ըսեցեքյ, վըեր մըեր մըեծը ծեն ա տամ, վըեր ինքյը կյա վուչ, ըսեցեքյ՝ ես քյինամ ը̈իրա̈ն կոշտը։

Տահանք քյինամ ըն կնգանը կոշտը, ասում, վըեր խոջան ըսոի պեն ա ասալ։ Էտ կնեգյն ասում ա.—Ես վախտ չօնըեմ ը̈ի-րա̈ն կոշտը քյինա̈լի, թա ես ըմ հարկավըեր, թող ինքյը կյա իմ կոշտըս, տըեսնամ հի՞նչ ա ասում։

Խոջան քյինա̈մ ա կոշտը, կլո̈խ տամ, հետնան ասում.—Հըրցնելը համութ չինի, քու ըլաչուխետ կոխկի ըլաչուխը հո̈ւրն ա՞։

Կնեգյն ասում ա.—Ընդըեղ իմ զորմիցիքյը մարթըս ա թաղված, մունք խափ պայման ընք իլա̈լ կապած, էնքան ըստըեղ պիտի կենամ, վըեր մըեռնեմ, ինձ տանեն ո̈ւրա̈ն քշտին թաղըեն։

Խոջան ասում ա.—Ես մին հարուստ մարթ ըմ, կնեգյ չօնըեմ, իմ մո̈ւլքյըս, իլըծ-չիլա̈ծըս մինչև մըեր կյանքըն վըերչը մըեզ բոլ ա, տըեսնում ըմ, վըեր տու քու մարթիտ հետե լա̈վ կնեգյ ըս իլա̈լ, մըղափուծ ա քու էտ ջա̈հիլ կյանքըտ, վըեր խըվըրցնում ըս. եք տու իմ կնեգյըս տըեռ, էսքան իլըծ-չիլա̈ծն էլ մըեզ կըմնա. ո̈ւրո̈ւշա̈ ծըեռք չի ինգյիլ։

Կնեգյը ղաբուլ ա անում, էտ խուջեն նհըետ փսակվում։ Տրանա ետը խոջան ասում ա.—Թա ինձ սիրում ըս, քյինա մարթիտ կյիրեզմանը քա̈նդի, մեյդը տո̈ւս կալ, քցի ծո̈րը։ Կնեգյը քյինա̈մ ա պա̈հը նան թոխուրը յոր օնում, մարթին կյիրեզմանը քա̈նդո̈ւմ, մեյդը տանում քցո̈ւմ ծո̈րը, կյամ խուջեն ասում.—Ասածըտ ըրալ ըմ։ Խոջան ասում ա.—Վըեր տու քու անմեղ մարթիտ կյիրեզմանը քա̈նդա̈լ ըս, վըսկըռքնեն ծո̈րն ածալ, իմն էլ իտի կանըես, քըզ մնան կնեգյն ինձ հարկավըեր չի, տո̈ւս եք, քյինա̈։